

Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ներկա փուլում կարևորելով ներդրումային գործընթացի աշխուժացումը, որը էական մախապայման է հետագա տնտեսական աճի ապահովման համար՝ խնայողությունների անբավարարությամբ բնութագրվող Հայաստանի տնտեսության զարգացման հիմնական ուղղությունը պետք է դառնա ներդրումային բարենպաստ միջավայրի ապահովումը և երկրի ներդրումային գրավչության բարձրացումը:

ՀՀ կառավարությունը ներդրումային քաղաքականությունը դիտում է որպես Հայաստանի տնտեսական զարգացման կարևորագույն ուղիներից մեկը: Այդ իսկ պատճառով իրականացվող ներդրումային քաղաքականությունը նպատակաուղղված է ներդրումներին խոչընդոտող գործոնների թուլացմանը կամ վերացմանը, ներդրումային և գործարար բարենպաստ միջավայրի ձևավորմանը, երկրի մրցակցային առավելությունների բացահայտմանը, Հայաստանում իրականացվող ներդրումների ծավալների մեծացմանը, ինչպես նաև վերոհիշյալ նպատակներին նպաստող շուկայական ենթակառուցվածքի զարգացմանը:

Հաշվի առնելով Հայաստանի ներդրումային միջավայրի օբյեկտիվորեն գոյություն ունեցող լուրջ սահմանափակումները՝ երկրի անբարենպաստ աշխարհագրական դիրքը, ներտարածաշրջանային ռազմաքաղաքական անկայունությունը, ռեսուրսային և հումքային աղքատ բազան, ներքին շուկայի փոքր ծավալները՝ երկրի տնտեսական զարգացման համար կարևոր գործոններ են տնտեսության մասնագիտացման նպատակով համաշխարհային շուկայի ճիշտ ոլորտների բացահայտումը, դրան համապատասխան օտարերկրյա ուղղակի ներդրումների խրախուսման ռազմավարության ընտրությունը և իրագործումը: Օրինակ՝ երկրի հիմնական առավելությունը որակյալ աշխատուժի առկայությունն է, որի օգտագործումը ներդրողներին հնարավորություն կտա զարգացած երկրների համեմատ ցածր աշխատավարձ վճարելով, ապահովել ցածր ինքնարժեք և գնային մրցունակություն՝ հատկապես արտաքին շուկայում:

ՍԱՄՎԵԼ ԻՍԿԱՆՂԱՐՑԱՆ

*ՀՀ պետական կառավարման
ակադեմիայի ասպիրանտ*

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ներդրումային միջավայրի զարգացմանը խոչընդոտող գործոնների մասին շատ հաճախ է խոսվում, սակայն բավականին հազվադեպ են հնչում տեսակետներ, որոնք անդրադարձ են կատարում այդ հիմնախնդիրների արմատներին: Ի վերջո ցանկացած հարցի պրոֆիլակտիկ «բուժումը» արդյունքում հանգեցնում է տվյալ ցավոտ խնդրի քողարկված զարգացման և չափերի մեծացման, ինչի հաղթահարումը մեծ դժվարություններ է առաջացնում և հսկայածավալ ջանքեր պահանջում՝ ընդ որում առանց երաշխավորված արդյունքներ խոստանալու:

Վարվող տնտեսական քաղաքականությունը թեև արտաքուստ հուսադրող է երևում, սակայն արդյունքում գնալով խորանում են ողջ տնտեսությունում գոյություն ունեցող անհամամասնությունները:

Տարիների փորձն ապացուցել է, որ հայ հասարակությունում չի գործում իշխանության ապակենտրոնացման մոդելը: Նման մտտեցումը խրախուսվում է արտաքին բազմազան ու հզոր շահագրգիռ ուժերի կողմից և կիրառման համար պարտադիր է դառնում, սակայն կոնկրետ պետության և ազգի զարգացման ու առաջընթացի տեսանկյունից հավանաբար այնքան էլ նախընտրելի չէ:

Փոքր պետությունների համար, ինչպիսին ՀՀ-ն է, առավել արդյունավետ համակարգ կարող է հանդիսանալ կառավարման խիստ աստիճանական բրգաձև մոդելը: Հակառակ պարա-

գայում տեղի է ունենում իշխանության առերես ապակենտրոնացում, սակայն իրականում ապակենտրոնացում է պատասխանատվությունը և, արդյունքում փոշիանալով, խիստ ծանր կացություն ստեղծում կոնկրետ ազգային և պետական նախընտրելի նպատակների ու շահերի իրականացման և վերահսկողության պարագայում:

Կառավարման մման կարգը հնարավորություն չի տալիս միավորել հնարավոր բոլոր ռեսուրսները և իրականացնել դրանց կենտրոնացված ու արդյունավետ շահագործում: Գործող մոդելի ձախողման համար էական հանգամանք է մաս ազգի «կենտրոնախույս» բնավորությունը: Եթե չկա կոնկրետ կոորդինացնող մարմին և իրավունքների ու պարտականությունների հստակ սահմանում, ապա հետևանքները պարզ են մույնիսկ առանց մեկնաբանությունների: ՀՀ-ն իր տնտեսության ծավալով և բնակչության թվով փոքր է մույնիսկ միջին մեծության քաղաքից, ուստի մման պարագայում իշխանության ապակենտրոնացումը, այն էլ բազմաթիվ տասնամյակների կենտրոնացված կառավարումից հետո, չի կարող դրական արդյունքներ ապահովել: Պատմությունը ցույց է տալիս, որ հայ ազգը հաջողության և բարգավաճման եզակի ժամանակաշրջաններում այդ արդյունքներն ապահովել է միայն խիստ կենտրոնացված կառավարման և համախմբման շնորհիվ:

Ինչպես ներդրումային միջավայրի կազմավորման, այնպես էլ ընդհանուր տնտեսական քաղաքականության հիմքում պետք է ընկած լինի ազգային գաղափարախոսությունը: Պարտադիր պետք է ունենալ ազգային ծրագիր, հստակ նպատակներ, որի արդյունքում արդեն հնարավոր կլինի տվյալ նպատակին հասնելու համար լավագույն ուղիներ որոնել: Ազգային նպատակը պետք է հիմնված լինի աշխարհաքաղաքական ներկա պայմաններում ազգի հնարավորինս մեծ զանգվածի համար արժանավայել կյանք և, որ շատ ավելի կարևոր է՝ վստահություն ներշնչող ապագայի ապահովման հարցը: Ի վերջո, ազգի բարգավաճման հիմքում ընկած է ազգային նպատակների ազգովին իրականացման հարցը: Ընդ որում, լավագույն արդյունք կարելի է սկսկալել, եթե մման գործընթացը ենթադրում է ազգի յուրաքանչյուր անդամի շահագրգռվածություն ընդհանուր նպատակի ձեռքբերման հարցում: Նման մոտեցումն առաջին հայացքից թերևս ուտոպիստական կարող է թվալ «ընդհանուր շահ» հասկացության՝ շուկայական տնտեսությանը ոչ այնքան համահունչ լինելու պատճառով: Սակայն միջազգային փորձը ցույց է տալիս, որ հենց ընդհանուր շահի ըմբռնումն է այնպիսի երկրների բարգավաճման հիմք հանդիսացել, ինչպիսիք են՝ Ճապոնիան, Իսրայելը, Չինաստանը, Գերմանիան և այլն:

Իհարկե, դժվար է պատկերացնել ներդրումային միջավայրի կտրուկ էական բարեփոխում, սակայն կարելի է հետևողական քաղաքականության դրսևորման պարագայում ներդրումային միջավայրի գոնե առկա ներուժը դարձնել իրագործելի:

Ներդրումային միջավայրի գրավչության հիմնական ցուցանիշներից է մաս ներդրումային պահանջարկի առկայությունը, որը սակայն, զնալով նվազում է: Եթե պետական տնտեսական քաղաքականությունը չի նպաստում ձեռնարկատիրության զարգացմանն ու մոր ձեռնարկությունների բարգավաճմանը, ապա գոնե ինքնուրույն կայանալու համար «ոտանելի» պայմաններ պետք է ապահովել ձեռնարկատերերի համար:

Ներդրումային միջավայրի հնարավորությունների բացահայտման տեսանկյունից առաջին հերթին հարկ է անդրադառնալ ներքին ռեզերվներին, և ապա՝ արտաքին:

Ներդրումային միջավայրի բարելավմանը նպաստող առաջին քայլը պետք է լինի տնտեսվարող սուբյեկտների համար հնարավորինս հավասար պայմանների ապահովման հարցը:

Այստեղ առաջին պլան է մղվում հատկապես փոքր և միջին ձեռնարկատիրության պաշտպանության խնդիրը, որը և արդյունքում հանգում է հասարակության մի ստվար զանգվածի տնտեսական շահերի պաշտպանությանը: Այս խնդրի լուծման ուղղությամբ շատ առաջարկներ են արվել ուղղված հատկապես բյուրոկրատիայի և կաշավածության, կողմնակալ գործելակերպի, շուկայում ոչ մրցակցային վարքի դրսևորումների դեմ, սակայն առաջադրվող լուծումները հիմնականում հանգում են խոչընդոտները «վերկից» հարթելու խնդրին:

Սակայն այս խնդիրը բխում է բազմաթիվ փոխկապակցված խնդիրներից: Առաջին հերթին ակնհայտ է հասարակության լայն շերտերի իրավագիտակցության խիստ ցածր մակարդակը: Մարդիկ շատ հաճախ անտեղյակ են ամենապարզ իրավունքներից և պարտականություններից, ինչն էլ տեղեկատվական դաշտի թերզարգացածության արդյունք է:

Օրինապահ հասարակություն ստեղծելու փորձեր արդեն իսկ նկատվում են (օրինակ ԿԲ-ում գործում է շուրջօրյա թեժ հեռախոսագիծ արժույթի փոխանակման կետերի գործունեության վրա «ներքևից» վերահսկողություն սահմանելու նպատակով: Համանման ծառայություն է առաջարկում վարորդների իրավունքների պաշտպանության «Աբիլլես» հասարակական կազմակերպությունը և այլն), սակայն նման գործելակերպը պետք է մասսայականացնել և տարածել տնտեսական կյանքի այն ոլորտներում, որոնք առավել անհամապատասխան են ներդրումային միջավայրի գրավչության տեսանկյունից: Օրինակ, կարելի է նման ծառայություն առաջարկել Պետական եկամուտների կոմիտեի, տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների հակաօրինական գործողություններին ահազանգելու նպատակով, քանի որ փորձը ցույց է տալիս, որ նույնիսկ առավել զարգացած տնտեսությամբ երկրներում, ինչպիսիք են Եվրամիության անդամ երկրները, վարչական ապօրինի ճնշումներն էական խոչընդոտ են հանդիսանում ձեռնարկատիրության զարգացման համար, էլ չենք խոսում անցումային տնտեսությամբ երկրների մասին¹:

Բացի երկրի ներքին տեղեկատվական դաշտի կատարելագործումը ներդրումային միջավայրի վրա խիստ բարերար ազդեցություն կարող է ունենալ երկրի պատշաճ ներկայացումն արտերկրում: Ընդ որում, այս պարագայում առավել մեծ միջոցներ և գործիքների առավել մեծ հավաքակազմ կպահանջվի, քանի որ միջազգային հանրությանը երկիր ներկայացնելն անհամեմատ ավելի պատասխանատու խնդիր է, քան ներքին տեղեկատվական դաշտի կատարելագործումը (չնայած, որ վերջինս իր կարևորությամբ չի զիջում առաջինին): Երկրի մասին պատշաճ և արդյունավետ տեղեկատվություն տարածելը մի շարք փոխհամաձայնեցված գործողությունների համախումբ է ենթադրում, որոնք առաջին հերթին պետք է իրենց մեջ ունենան երկրի տնտեսական և քաղաքական շահերի արտահայտման նախադրյալները, սակայն դուրս չգան պատշաճության և արժանահավատության շրջանակներից:

Միջոցառումների իրականացման հիմքում նախ և առաջ պետք է դնել հայկական սփյուռքի՝ հայրենիքի նկատմամբ հետաքրքրության մեծացման հարցը: Չնայած վերջին տարիներին աշխատանքներ են տարվում ներքին գործընթացներում սփյուռքի ներգրավվածության բարձրացման ուղղությամբ (մշակույթի ոլորտ, սպորտ, բարեգործական ծրագրեր և այլն), առայժմ թույլ է սփյուռքի ներգրավվածությունը տնտեսության ոլորտում (եթե հաշվի չառնենք իրականացվող աջակցության ծրագրերը):

Սփյուռքահայերի համար տնտեսական շահագրգռվածություն կարող է առաջանալ հայրենիքի վերաբերյալ տնտեսական բնույթի պատշաճ տեղեկատվության ապահովման պարագայում միայն: Սփյուռքահայությանը (և ոչ միայն) տնտեսական տեղեկատվությամբ ապահովելու հարցում մեծ ներդրում կարող են ունենալ արտերկրում ունեցած ՀՀ դիվանագիտական կապերը, հատկապես՝ դեսպանատներին կից տեղեկատվական կենտրոններ ստեղծելով, արտասահմանյան տեղեկատվական ոլորտի փորձառու կազմակերպությունների ներգրավման միջոցով և այլն:

Երկրի տնտեսությունն արտերկրում ներկայացնելու մեկ այլ արդյունավետ տարրերակ են տարբեր հեղինակավոր կազմակերպությունների կողմից շնորհված վարկանիշները, որոնք որպես կանոն, ներդրումային որոշումներ կայացնելիս թիվ մեկ ազդակն են հանդիսանում:

Այս առումով անհրաժեշտ է ստանալ առավելագույն թվով միջազգային վարկանիշներ: Սակայն վարկանիշ ստանալը դեռևս բավարար չէ երկրի ներդրումային գրավչության բարձրացման գործում: Այստեղ առաջնային է վարկանիշային աղյուսակում երկրի գրաված տեղը: Ընդ որում, հաճախ երկիրն, ունենալով վարկանիշային գնահատականների իրականում բավականին

¹ «Տնտեսական քաղաքականություն և աղբատություն» փետրվար/մարտ 2005թ., էջ 23:

բարձր մակարդակ, ձախողվում է պատշաճ վարկանիշ ստանալու գործընթացում: Նման պարագայում անհրաժեշտություն է առաջանում օգտվել այլ երկրների հաջող փորձից՝ ներգրավելով օտարերկրյա փորձառու կազմակերպությունների, որոնք զբաղվում են երկրի իմիջի ձևավորմամբ և դրա պատշաճ ներկայացմամբ:

Ներդրումներն այս ոլորտում թեև առաջին հայացքից կարող են երկրորդական թվալ, սակայն դրանք, ամենայն հավանականությամբ, կտան իրենց արդյունքը՝ համաշխարհային հանրության աչքում ՀՀ հեղինակությունը բարձրացնելով:

Ինչպես ընկերությունը չի կարող ներկայանալ սպառողին առանց գրագետ գովազդային քաղաքականության, այնպես էլ երկիրը վերը նշված միջոցառումների անտեսման արդյունքում կարող է զգալի հեռանկարային հնարավորություններ բաց թողնել:

Վարչարարական ճնշումներն առավելապես զգալի են մանր ու միջին ներդրողների շրջանում, որոնք, կարծում ենք, առավել արդյունավետ ներդրումային ներուժ ունեցող զանգվածն են կազմում (օրինակ խոշոր ձեռնարկատիրոջ կողմից ձեռք բերված մեկ թանկարժեք ավտոմեքենայի արժեքով կարելի է առնվազն հինգ մանր տնտեսվարողների գործունեություն ծավալելու հնարավորություն տալ, որոնցից յուրաքանչյուրը կարող է ներգրավել առնվազն երկու վարձու աշխատողի):

Գաղտնիք չէ, որ տնտեսական ակտիվությանը (ուստի նաև ներդրումներին) խոչընդոտող հիմնական գործոններից մեկը հարկային համակարգի աշխատանքն է: Բազմաթիվ անելիքներ կան այս համակարգի աշխատանքի բարելավման և աշխատանքի արդյունավետության բարձրացման տեսանկյունից: Հատկապես մեծ է ճնշումը հարկային վարչարարության միջոցով: Հարկային մարմինների գործողությունները միտված են ոչ թե օրինական միջոցներով հարկերը հավաքագրելուն, այլ պլանավորված ցուցանիշներով ամենաբազմազան ճնշման մեթոդներով լրացուցիչ հակաօրինական ֆինանսական բեռ հարկատուների ուսերին ավելացնելուն: Նման գործելակերպը ուղղակիորեն փաստում է հարկային համակարգի անկատարության և գործելակերպի թերզարգացածության աստիճանը:

Եթե գործնականում հնարավոր է յուրաքանչյուր հարկատուի նկատմամբ պատասխանատվություն կիրառել, ապա պետք է անպայման կարգ սահմանվի հարկատուներին՝ իրենց կոնկրետ և համապարփակ իրավունքներին ու պարտավորություններին՝ հարկային տեսուչի կողմից պարտադիր գրավոր ծանուցման համար: Այլապես հարկային համակարգի աշխատողները շահագրգռված են հնարավորինս սահմանափակել հարկատուին հասանելի տեղեկատվությունը: Արդյունքում, հատկապես այն ձեռնարկատերերը, ովքեր հնարավորություն չունեն որակյալ խորհրդատվական ծառայություններից օգտվելու, հայտնվում են տեղեկատվական վակուումի մեջ և, շատ հաճախ, դառնում կառավարչական օղակների աշխատողների անարդարացի գործողությունների զոհ:

Ներդրումային միջավայրի բարելավման նպատակով անհրաժեշտ է արմատապես փոխել հարկատուների նկատմամբ կիրառվող քաղաքականությունը: Ի վերջո հարկահավաքման գործընթացը բարդ և նուրբ երևույթ է, քանի որ տնտեսվարողի համար, ամեն դեպքում, հարկադիր կերպով կատարվող աշխատանք է ենթադրում, իսկ մարդն իր բնույթով ռացիոնալ էակ է, ուստի նրա ներքին համոզմունքներին դեմ է սեփական աշխատանքի արդյունքի մի մասից կամքին հակառակ հրաժարումը:

Տնտեսվարողների գործունեության վրա հարկային վարչարարության բացասական ազդեցության մեղմմանն ուղղված քայլ կարող է լինել նաև հարկատու-հարկային մարմիններ շփման նվազեցումը, որն առաջին հերթին կարող է արտահայտվել ստուգումների կազմակերպման գործընթացի հստակեցման, պարզեցման, ինչպես նաև հարկային հաշվետվությունների պարզեցման, հաճախակիության կրճատման, փաստաթղթաշրջանառության ժամանակակից համակարգերի կիրառման միջոցով:

Հարկային մարմնի և տնտեսվարողների միջև համատեղ աշխատանքի խրախուսումն արդյունքում կրերի հարկահավաքման արդյունավետության բարձրացման:

Ներդրումային միջավայրի գրավչության բարելավման տեսանկյունից խիստ կարևոր նշանակություն ունի երկրում կարգավորման քաղաքականությունների հետ կապված անորոշությունը: Վերջինս գործարարությանը զբաղվելու խոչընդոտող ամենալուրջ խնդիրներից մեկն է: Ըստ գործարար միջավայրի ուսումնասիրության արդյունքների, այն դժգոհություն է առաջացրել տնտեսվարողների շուրջ 50%-ի շրջանում¹:

Ի վերջո, տնտեսվարողի տեսանկյունից գործարարությանը զբաղվելու համար առավել վճռորոշ է սպասվելիք հեռանկարը, քան առկա տնտեսական իրավիճակը: Այս պարագայում վճռորոշ է դառնում վարվող տնտեսական քաղաքականության լրջախոհության, հիմնավորվածության և կայունության խնդիրը:

Պատահական չէ, որ Համաշխարհային անկի մասնագետների գնահատմամբ պետական քաղաքականության կանխատեսելիության աճը կարող է ավելացնել նոր ներդրումների հավանականությունը ավելի քան 30%-ով²:

Հասարակության ամենալայն շրջանակի տեղեկացվածությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հասարակություն-կառավարման բարձրագույն օղակներ տեղեկատվական կապի զարգացման քննարկված հնարավորությունները էապես կկրճատեն կոռուպցիոն ռիսկերը, կբարձրացնեն բոլոր կառավարչական օղակների պատասխանատվությունը, արդյունքում կխստանա նաև ուղղահայաց վերահսկողությունը, ինչն էլ իր հերթին բարենպաստ պայմաններ կստեղծի տնտեսական ու քաղաքական միջավայրի առողջացման, օրինական իրավունքների ու շահերի պաշտպանության մակարդակի բարձրացման համար:

Ներդրումային միջավայրի գրավչության տեսանկյունից խիստ մտահոգիչ է տրանսպորտի խնդիրը: Պատահական չէ, որ վերագրված կորստերից հանելով որպես ՀՀ-ում գործարարության զարգացման խոչընդոտ առաջնահերթ նշել են փոքր շուկան և տրանսպորտային ծախսերի խիստ բարձր մակարդակը³: Իսկ ՀՀ բեռնափոխադրումների ծավալում գնալով գերակշռող են դառնում ավտոմոբիլային փոխադրումները, որը փոխադրումների ամենաթանկ ձևերից է: Արդյունքում անմրցունակ են դառնում հատկապես արտահանող արտադրությունները:

Ստեղծված դրությունը կարող է մեղմել թերևս երկաթուղային տրանսպորտի զարգացումը, որի հեռանկարները, սակայն, առայժմ աղոտ են և լավատեսություն չեն ներշնչում: Սակայն տրանսպորտի խնդիրը հարաբերականորեն օբյեկտիվ խոչընդոտ է, և դրա լուծումը քիչ չափով է կախված վարվող տնտեսական քաղաքականությունից:

Այստեղ մոտեցումը պետք է լինի այլ ուղղությամբ. առաջին հերթին պետք է կենտրոնանալ արտահանման ոլորտի «թեթևացման» վրա, որը կենթադրի փոքրածավալ և մեծարժեք արտադրանքի (հատկապես՝ գիտատեխնիկական ոլորտի), տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ծառայությունների արտադրության ու արտահանման խթանում, նաև զբոսաշրջության զարգացում:

Երկարաժամկետ ներդրումային գործունեության տեսանկյունից ամենագրավիչ ոլորտներից մեկը գիտատար արտադրության զարգացումն է: Վերջինիս համար հանրապետությունում հարաբերականորեն բարենպաստ պայմաններ կան (գիտական ներուժի առկայություն, ոլորտի ավանդույթներ, էժան աշխատուժ և այլն): Գիտության և արտադրության կապի ապահովման համար ներկայումս առաջնահերթ է դառնում մտավոր սեփականության լիարժեք պաշտպանության հարցը:

Հետխորհրդային տարիներին խզվել է գիտություն-արտադրություն կապը, որի արդյունքում գիտնականները մնացել են ուշադրությունից դուրս, հարկադրված արտագաղթել են, իսկ ձեռնարկատիրության ոլորտը նորարարական առաջարկությունների ու գաղափարների գրեթե լիակատար քաղցի պայմաններում է ձևավորվում:

¹ ՎԶԵԲ և ՀԲ կողմից իրականացվող գործարար միջավայրի և ձեռնարկատիրական գործունեության ուսումնասիրություն, 2005 թ., էջ 3:

² "Вопросы экономики", N5, 2006 г., стр. 69.

³ Տնտեսական քաղաքականություն և աղքատություն, 2005, էջ 22:

Գիտատար արտադրության զարգացման առումով անփոխարինելի է վեցնյուրային ներդրումների դերը: Այս ոլորտի արգասիքն են այնպիսի համաշխարհային հսկաներ, ինչպիսիք են՝ IBM-ը և Yahoo-ն: Ընդ որում, վեցնյուրային ներդրումների ոլորտը չի սահմանափակվում միայն տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառի նվաճումներով: Այսօր հենց այս ներդրումների հաշվին են ֆինանսավորվում ֆիզիկայի, քիմիայի, կենսաքիմիայի և այլ ոլորտների առավել հեռանկարային հետազոտությունները:

Աճելիքներ կան մասնագիտության ոլորտը լայն հասարակությանը ներկայացնելու ուղղությամբ: Պարբերաբար կազմակերպվող ցուցահանդեսների և մամուլային այլ միջոցառումների անցկացմամբ, որոնց կարող են մասնակցել գիտահետազոտական հիմնարկներ, վարկային կազմակերպություններ, արտադրողներ և այլ շահագրգիռ անձինք, հնարավոր կլինի առավել մոտիկից ծանոթացնել հեռանկարային ներդրողներին և ներդրումային ծրագրեր առաջարկողներին:

Հասարակական հարաբերությունների հիմքում դրվում է երկրի օրենսդրաիրավական համակարգը: Այն մասնատեսական համակարգի ձևավորման և տնտեսաիրավական հարաբերությունների կարգավորման աղբյուր է հանդիսանում: Օրենսդրական համակարգի որակից է կախված, թե տվյալ երկիրն ինչ տեղ կգրավի միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում: Դրանով է պայմանավորված մասնաճանաչության առաջընթացի հնարավորությունը: Ընդ որում, օրենքների բազմաթիվ լինելու փաստը դեռևս չի ենթադրում իրավահարաբերությունների բարձր մակարդակ: Հաճախ իրավական նորմատիվ ակտերի բազմազանությունն ու մեծ թիվը պատճառ են հանդիսանում իրավական համակարգի աշխատանքի արդյունավետության անկման:

Օրենսդրաիրավական համակարգի արդյունավետ գործունեության համար օրենսդրական դաշտի պարզեցմանը, տարբերությունների բացառմանը զուգահեռ շատ կարևոր է օրենքի կայունությունը: Շատ դեպքերում ներդրողներին ներդրումային միջավայրի «տրակի» վերաբերյալ բացասական ազդակ է տալիս ոչ թե օրենքի որակը, այլ դրա անկանխատեսելիությունը: Օրինակ՝ հարկային օրենսդրության փոփոխությունների հաճախակիության հարցում միակ սահմանափակող հանգամանքը փոփոխություն կատարելու համար օրենքով սահմանված մեկ տարվա նվազագույն ժամկետն է: Օրենսդրությունն ամեն տարի պարտադիր կերպով փոփոխություն է կրում (ենթաօրենսդրական ակտերի փոփոխությունները չհաշված), որը հնարավորություն չի տալիս տնտեսվարողներին մույնիսկ կարճաժամկետ հեռանկարի (ասենք՝ 3-5 տարվա) համար ներդրումային ռազմավարություն մշակել: Արդյունքում օրենքների անկանխատեսելիությունը դառնում է գործարարությամբ զբաղվելու խոչընդոտող հիմնական գործոններից մեկը: Այս խնդիրը հատկապես տարակուսանքի մթնոլորտ է առաջացնում օրինապահ հանրության շրջանում, քանի որ ապօրինի գործունեությամբ զբաղվողի համար քիչ նշանակություն ունի, թե օրենքն ինչ է մախատեսում: Կարգավորման քաղաքականությունների հետ կապված անորոշությունը գործարարությամբ զբաղվելու խոչընդոտող բնորոշել են ձեռնարկատերերի շուրջ 1/3-ը¹:

Նշված խնդրի մեղմման նպատակով անհրաժեշտ է երկարաձգել նորմատիվ իրավական ակտերի փոփոխության համար նախատեսված նվազագույն ժամկետները՝ դարձնելով մինչև 3 տարի, որոշ դեպքերում՝ մասնավոր:

Ներդրումային միջավայրի գրավչությունն ապահովող կարևորագույն գործոններից է ազատ և առողջ մրցակցության ապահովումը: Այս առումով թերևս ՀՀ տնտեսությունն անչափ հեռու է «շուկայական» կոչվելուց:

Ազատ մրցակցության ապահովման տեսանկյունից առաջնահերթ խնդիրն այն է, թե արդյոք լիազոր մարմինն իրոք հնարավորություն ունի իր գործառնություններն արդյունավետ իրականացնելու, եթե մույնիսկ ենթադրենք, որ ցանկությունն ու կամքը առկա են: Մեր իրականությունում տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի դերակատարումը, մեր կարծիքով, դառնում է խիստ անարդյունավետ, քանի որ դրա գործունեությունը

¹ ՎՋԵԲ և ՀԲ կողմից իրականացվող գործերը միջավայրի և ձեռնարկատիրական գործունեության ուսումնասիրություն, 2005 թ., էջ 3:

հարյուր տոկոսով կախված է ԱԺ հայեցողությունից (տարեկան ծրագիրը և հաշվետվությունը ԱԺ-ի հավանությանը չարժանանալու դեպքում հանձնաժողովի անդամները տասնօրյա ժամկետում հրաժարական են տալիս)¹: Այս առումով, հավանաբար ավելի արդյունավետ կլինի այս ոլորտի կարգավորման լիազորությունները կառավարությանը ենթակա լիազոր մարմնի կամ ուղղակի դատարանի վերահսկողության տակ դնել:

Երկարաժամկետ ներդրումներին նպաստող հիմնական գործոններից մեկն էլ դրանց եկամտաբերությունն է, որն ուղղակիորեն պայմանավորված է հարկային բեռի մեծությամբ: Հարկային բեռը գործարարների շուրջ հիսուն տոկոսի կարծիքով գործարարությամբ զբաղվելուն խոչընդոտող գերակա խնդիրներից է²:

Որոշ մասնագետների գնահատմամբ անվանական հարկային բեռը կազմում է շուրջ 32.2 %³, ինչը բավականին բարձր է այն պարագայում, երբ խնդիր է դրվում արագընթաց տնտեսական զարգացման (նույն աղբյուրի համաձայն հարկային բեռի սահմանային մեծությունը, որը տնտեսական ճգնաժամի սկիզբ կարող է հանդիսանալ, 35 % է կազմում):

Եթե հաշվի առնենք նաև, որ 2005թ. հարկային վնաս հայտարարագրած ձեռնարկությունների ցանկը ներառում է գրեթե բոլոր խոշոր ձեռնարկությունները⁴, ապա պարզ է դառնում, թե հիմնականում հարկատուների որ զանգվածն է առավել տուժում հարկային բարձր դրույքաչափերից: Այստեղ հարկերի գործառնությունների խթանիչ դերը գրեթե հաշվի չի առնվում հանրապետությունում, քանի որ գերակա խնդիրը դրանց ֆիսկալ գործառնության ապահովումն է:

Հարկային բեռի թեթևացման առումով թերևս արդյունավետ կլինեք որոշ հարկատեսակների գծով (մասնավորապես շահութահարկի և եկամտահարկի, որոնց հավաքագրման մակարդակը խիստ ցածր է) սահմանել պրոգրեսիվ նվազող դրույքաչափեր:

Հարկային օրենսդրության պարագայում հաճախ անտեսվում է նաև հարկերի մեկ այլ կարևոր գործառնություն՝ դրանց կարգավորիչ դերը: Ավելին, այն գործում է հակառակ ուղղությամբ: Շահութահարկի գծով օտարերկրյա ներդրողներին և օտարերկրյա մասնակցությամբ ձեռնարկություններին տրվող արտոնությունները բացասաբար են անդրադառնում տեղական ձեռնարկությունների մրցունակության վրա, հատկապես՝ փոքր և միջին ձեռնարկությունների, որոնք, փաստորեն, հայտնվում են առավել խիստ հարկային դաշտի պայմաններում:

Բացի այդ, օտարերկրյա ներդրողներն այսպես թե այնպես շահագրգռված են ներդրումներ իրականացնել գերշահույթ ապահովող ոլորտներում (հաշվի առնելով ՀՀ ռիսկայնության բարձր մակարդակը), ուստի, նրանց համար էական նշանակություն չունի շահութահարկի արտոնության առկայությունը կամ բացակայությունը:

Օտարերկրյա ներդրումների ներգրավման տեսանկյունից առավել արդյունավետ կլինեն երկրի ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումները, քան հարկային արտոնությունները: Գաղտնիք չէ, որ կապիտալի ամենախոշոր ներգրավողները զարգացած երկրներն են, որոնք աչքի են ընկնում նաև խիստ հարկային օրենսդրությամբ:

Ըստ էության ձևական բնույթ է կրում «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին ՀՀ օրենքը», որի դրույթները հաճախ անտեսվում են, և ոչ պակաս հաճախ հակառակ որոշումների ենք ականատես լինում: Յանկալի կլինեք հատկապես օրենքի այն դրույթներին լուրջ ուշադրություն դարձնել, որոնք ենթադրում են բարենպաստ հարկային քաղաքականության իրականացում, վիճակագրական հաշվետվությունների և հաշվապահական հաշվառման պարզեցված համակարգերի ստեղծում և այլն:

Ներդրումային միջավայրի գրավչության բարելավման տեսանկյունից, ինչպես նաև տնտեսության հիմքերի ամրապնդման և առաջընթացի առումով կարևոր է տնտեսության գերա-

¹ ՀՀ գործող օրենքների ժողովածու /1999-2000թթ./, գիրք Գ., ՊՏ ՓԲԸ 2000թ., էջ 426, 427:

² ՎԶԵԲ և ՀԲ կողմից իրականացվող գործարար միջավայրի և ձեռնարկատիրական գործունեության ուսումնասիրություն, 2005 թ., էջ 3:

³ Ա. Սարգսյան, «Հարկային բեռի կառավարման հիմնախնդիրները ՀՀ-ում», ատենախոսության սեղմագիր, Երևան, 2006թ., էջ 20:

⁴ www.taxinfo.am

կա ոլորտների օրենսդրորեն սահմանումը, որը բարենպաստ պայմաններ կառաջադրի տնտեսության ռազմավարական ոլորտների զարգացման առումով: Այս կապակցությամբ քայլեր են արվել հարկային օրենսդրության մեջ: Նկատվում է տնտեսության զարգացման տեմպերի խիստ անհամասնադասություն մարզային կտրվածքով: Սահմանամերձ բնակավայրերի և առավել դանդաղ զարգացող մարզերի տնտեսական աջակցության հարցը օրենսդրական ուժ ստանալու դեպքում կարող է էական ազդեցություն ունենալ ներդրումների ներգրավման հարցում: Առաջին հերթին պետք է ուշադրություն դարձնել արդյունաբերությանը և հատկապես արտահանման ներուժ ունեցող ճյուղերին:

Երկարաժամկետ ներդրումներին նպաստող գործոն կարող է հանդիսանալ ֆինանսաարդյունաբերական խմբերի ստեղծումը: Ֆինանսաարդյունաբերական խմբերի ստեղծման և այդ ոլորտում համագործակցության առումով ՀՀ և մի շարք երկրների միջև իրավական փաստաթղթեր կան կնքված («ՀՀ և ՌԴ միջև մինչև 2010 թ. երկարաժամկետ համագործակցության մասին պայմանագիր», 29.03.2002 թ., «ՀՀ և ՌԴ միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին պայմանագիր», 05.11.1998 թ., «ՀՀ և Ուկրաինայի միջև 2001-2010 թթ. տնտեսական համագործակցության մասին պայմանագիր», 14.03.2002 թ., «ՀՀ կառավարության և Վրաստանի կառավարության միջև ֆինանսա-արդյունաբերական խմբեր ստեղծելու հիմնական սկզբունքների մասին համաձայնագիր», 18.09.1998թ. և այլն)¹, սակայն բացակայում է տվյալ ոլորտի կարգավորմանն ուղղված օրենսդրությունը: Անհրաժեշտ է ընդունել «Ֆինանսաարդյունաբերական խմբերի մասին» օրենք, որը կկանոնակարգի դրանց ստեղծման, գործունեության հետ կապված իրավահարաբերությունները:

Ամփոփելով՝ կարելի է եզրակացնել, որ նույնիսկ, եթե տվյալ կառավարման համակարգը, մեղմ ասած, այնքան էլ չի նպաստում ներդրումային միջավայրի զարգացմանը և բարելավմանը, այդուհանդերձ չի կարելի պնդել, որ ներկայումս օգտագործվում են հնարավոր բոլոր ռեսուրսները: Որոշակի կազմակերպական և օրենսդրական միջոցառումների հետևողական կիրառումը կարող է էական նպաստել երկրում ներդրումային միջավայրի գրավչության բարձրացմանը, ներդրումային պահանջարկի մեծացմանը, ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործմանը, ինչի արդյունքում տեղի կունենա համընդհանուր կենսամակարդակի աճ, որը տնտեսության առաջնային խնդիրն է հանդիսանում:

ԻՐԻՆԱ ՉԱԿՈՔՅԱՆ

*ՀՀ ԳԱՍ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի ավագ գիտաշխատող, տ.գ.թ*

ՎՃԱՐԱՅԻՆ ՉԱՇՎԵԿՇՈՒ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Միջազգային ինտեգրման աստիճանաբար խորացող ընթացքները նոր պահանջներ են ներկայացնում մեր երկրի արտաքին տնտեսական հարաբերությունների կատարելագործման խնդրի հանդեպ: Վերջին տարիներին (կապված մաս 2003 թվականից Առևտրի համաշխարհային կազմակերպությանը Հայաստանի անդամակցության հետ) ընթացող զարգացումները՝ հատկապես առևտրային և ֆինանսական հոսքերի ազատականացման գործընթացները, թելադրում են ուսումնասիրել արտաքին հատվածի ակնկալվող միտումները և դրանց ազդեցությունը երկրի առևտրային և վճարային հաշվեկշիռների վրա:

¹ Lexpro նորմատիվ իրավական ակտերի տեղեկատու: